ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«02» սեխտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-56/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02508699) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 24.12.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-7581 գրության հիման վրա, 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին

(այսուհետև նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված կազմակերպությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 08.02.2016թ. թիվ 01/04.1/333-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 01.10.2015թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 գրությամբ ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ դատական դեպարտամենտի 07.07.2016թ. թիվ Դ-1Ե-4377 գրության համաձայն՝ վերջինիս կողմից կազմակերպված գնման ընթացակարգերին «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել 04.11.2015թ. և 02.04.2016թ. և ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 13.01.2016թ. թիվ 01/04.1/42-16 գրությամբ դիմել է «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին և առաջարկել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 122.1-րդ կետի համաձայն՝ Կենտրոնի ծանուցումն ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել ներկայացված նյութերի վերաբերյալ կարծիք և (կամ) հիմնավորող փաստաթղթեր:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով 11.08.2016թ. ժամը 15:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-56/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացրեց ընկերությանը ցուցակում ներառելու վերաբերյալ առարկություններ՝ մասնավորապես, հայտնեց, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հայտարարված գնման ընթացակարգի հրավերով չի սահմանվել ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված մուտքային դարակի 250 թուղթ տարողությունը ինչ ֆորմատի և ինչ խտության թղթի համար պետք է նախատեսված լինի: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ այս պարագայում իրենց կողմից գնման ընթացակարգի շրջանակներում առաջարկված XEROX Phaser 3020 BI տպիչն 80գ/մ2 խտությամբ թղթի համար ունի նախատեսված 250 թղթի համար նախատեսված մուտքային դարակ: Որպես վերոհիշյալի հավաստում «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացրել է Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերության 10.08.2016թ. գրությունը:

Վերոնշյալ գրության համաձայն (առկա է նոտարական թարգմանություն)՝ Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերությունը հայտնել է, որ վերջինս հանդիսանալով տպիչների, պատճենահանող սարքերի, սկաներների, սպառման ապրանքների և պահեստամասերի պաշտոնական արտադրող՝ հաստատել է, որ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բաշխված բոլոր ապրանքները համապատասխանում են որակի միջազգային չափանիշներին, որով հաստատվում է ապրանքների բնօրինակ լինելու փաստը:

Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերությունը հայտնել է, որ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Xerox Phaser 3020BI-ն համապատասխանում է թղթերի համար նախատեսված սկուտեղի տարողության համար նախատեսված պարամետրերին, որի վերաբերյալ տեխնիկական տվյալները զետեղված են պաշտոնական տեղեկատվական բրոշյուրայում և համապատասխանում են Phaser 3020BI թղթերի համար նախատեսված սկուտեղի տարողության հիմնական մուտքային մեդիային, որը կիրառվում

է 80գր/մ2 մեդիա տեսակի կիրառման պայմաններում: Դեմո Սպիտի Կենտրոնի կողմից իրականացված ուսումնասիրության և փորձարկման արդյունքների հիման վրա, պարզվել է, որ թղթի սկուտեղի տարողությունը կախված է թղթի հաստությունից և որակից:

Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերությունը տեղեկացրել է, որ կիրառելով թղթի համար նախատեսված համապատասխան տարբերակները, հնարավոր է ստանալ թղթի սկուտեղի առնվազն 250 թղթի (Ա4/210 x 297 մմ՝ 45-50գր հատուկ լազերային մեդիայի միջոցով) համար նախատեսված թղթի տարողության ծավալ:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ դատական դեպարտամենտը 24.12.2015թ. թիվ ԴԴ-3-Ե-7581 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել Պատվիրատուի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի վերաբերյալ ի հայտ եկած տեղեկատվությունը և ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել գրավոր որևէ դիրքորոշում Ընկերության կողմից «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնով հրավերի տեխնիկական բնութագրին անհամապատասխան հայտ ներկայացնելու վերաբերյալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 11.08.2016թ. ժամը 15:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-56/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-56/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրի 3-րդ չափաբաժնի համաձայն՝ գնման առարկան է հանդիսացել լազերային տպիչ: Մասնավորապես, պահանջվել է, որ լազերային տպիչը ունենա ... ***250 թղթի մուտքային դարակ***...:

3. Ընթացակարգին «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի թիվ 4.1 հավելվածի համաձայն՝ Ընկերությունը հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող թիվ 3 չափաբաժնում նշված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.11.2015թ. կայացված նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն:

5. Նույն արձանագրության 3 կետի համաձայն՝ Ընկերությանը առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2015թ. նոյեմբերի 17-ը ներառյալ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

6. «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն 16.11.2015թ. թիվ 5 հավելվածով ներկայացրել է Ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2015թ. կայացված նիստի թիվ 7 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից

ներկայացված առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը հրավերով սահմանված համապատասխան ապրանքների անվանումներին և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից եզրակացություն ստանալու նպատակով հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2015թ. կայացված նիստի թիվ 8 արձանագրության «բ» ենթակետի համաձայն՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված ապրանքի անվանմանը և տեխնիկական բնութագրին: Հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2015թ. կայացած նիստի թիվ 9 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի շտկել սաձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունը:

10. Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 3-րդ չափաբաժնի մասով «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

11. Կենտրոնը 08.02.2016թ. թիվ 01/04.1/333-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 01.10.2015թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 գրությամբ ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

12. ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրությամբ Կենտրոնին տեղեկացրել է, որ ՀՀ դատական դեպարտամենտի 07.07.2016թ. թիվ Դ-1Ե-4377 գրության համաձայն՝ վերջինիս կողմից կազմակերպված գնման ընթացակարգերին

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել 04.11.2015թ. և 02.04.2016թ.:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

13. Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերության 10.08.2016թ. գրության համաձայն՝ XEROX Phaser 3020BI լազերային տպիչ սարքը 45-50գր խտության թղթի դեպքում ***կարող է սպանալ 250 թղթի համար նախատեսված քանակ:***

5. <u>ՍՅ-ԳԲԽ-56/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 24.12.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-7581 գրությունը և կից փաստաթղթերը, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի 10.08.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն թիվ 5 հավելվածով ներկայացրել է առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը, որի համաձայն՝ XEROX Phaser 3020BI լազերային տպիչ սարքը ունի 150 թղթի համար նախատեսված մուտքային դարակ:

Սակայն Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերությունը 10.08.2016թ. գրությամբ տեղեկացրել է, որ իրենց ընկերության կողմից իրականացված ուսումնասիրության և փորձարկման արդյունքում պարզվել է, որ XEROX Phaser 3020BI լազերային տպիչ սարքի համար կիրառելով թղթի համար նախատեսված համապատասխան տարբերակները, հնարավոր է ստանալ ***թղթի սկուտեղի առնվազն 250 թղթի (A4/210 x 297 մմ՝ 45-50գր հատուկ լազերային մեդիայի միջոցով) համար նախատեսված թղթի տարողության ծավալ:***

«ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուն գնման առաջկա հանդիսացող լազերային տպիչ սարքի համար նախատեսել է, որ այն պետք է ունենա 250 թղթի համար նախատեսված մուտքային դարակ, սակայն թիվ 1 հավելվածում ***չի նշել A4 ֆորմատի թղթի համար նախատեսված խտությունը:***

Ուսումնասիրելով ներկայացված փաստերը, այդ թվում նաև Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերության 10.08.2016թ. գրությունը՝ գտնում ենք, որ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, քանի որ, ըստ Քսերոքս Լիմիթեդ (XEROX Limited) ընկերության, «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի կողմից «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-04» ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացված XEROX Phaser 3020BI լազերային տպիչ սարքը 45-50գր խտության թղթի դեպքում կարող է ստանալ 250 թղթի համար նախատեսված թղթի տարողության ծավալ, ինչը պահանջվել է գնման Ընթացակարգի հրավերով:

Հետևաբար, Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ ֆինանսների նախարարության 30.12.2015թ. թիվ 1/73-1/42798-15 և 14.07.2016թ. թիվ 1/73-3/18334-16 գրություններով ներկայացված «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02508699) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի բացակայության հիմքով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-56/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան